Բեթղեհէմ. երբեմն յորդորէր չատանալ փոքու իւիք, և երբեմն սպառնայր առաջի եդեալ զապագայն՝ թէ խանգարեմ զամենայն գործս ձեր, յորդոր լինէր նաև Ցունաց, ունիլ Հայոց իրաւունս, և զինքն ցուցանէր իբրեւ պաշտպան նոցին և աշխատաւոր, սակաւուք գոհ առնել զՀայս՝ և պահել զյարգ մեծութեան Ցունաց, և այլ այսպիսի բանք սնոտիք։ Նուրի էֆէնտի կոչեաց զնա առ իւր 'ի ձեռն Ջուխատարի և բարկութեամբ ասէ ցնա, եթէ ժողովեալ զԲրիստոնեայս առանձին կամիս հոգալ զգործն, չէ պարտ մեզ աստ. միթէ գրեա՞լ իցէ Տէրութիւնն ժողովել զերկուս ազգս և աղաչանօք գործ վճարել, արժա՞ն իցէ Դատաւորի երթալ յոտս Քրիստոնէից և աղաչել, միթէ քե՞զ միայն յանձն եղեւ այս գործ, ո՞չ ասպաքէն Քաղաքապետն և բոլոր այլազգիք աստ են, և ունին իրաւունս վերահաս լինել բովանդակ գործոյն, այլովքն հանդերձ։ Ջանամ ասէ տալ եզրակացութիւն ինչ գործոյն առանց խռովութեան, և ապա յանդիման կացուցանել քեզ զբովանդակութիւն նորին։ Նուրի՝ զի՞նչ արդեօք իցէ Ջանք քո և բովանդակութիւն գործոյն, հրամանաւ Ցունաց տալ սակաւ ինչ Հայոց և հակառակիլ հրամանի Արքային, կարծեմ թէ մոռացեալ իցէ քո զդատապարտութիւն Մուսաննրի Դատաւորին, և լռեաց։

Ապա դարձուցեալ զբանս իւր առ Քրիստոնեայս ասէ, հրամանաւ բարերար տեառն իմոյ Արքայի երկու ազգքդ բաժանորդ էք 'ի տեղւոջ յայսմիկ ամենայն պարագայիւք. երթայք խորհեցարուք առանձին, եւ ապա եկեալ պատմեցէք մեզ. 'ի բաց հանէք 'ի մտաց ձերոց զայն ամենայն զոր եդեալ էք, զի ըստ հրովարտակին պարտ է կատարիլ ամենայն իրաց. Ցոյնք տակաւին կացեալ նկատէին յերեսս Դատաւորին, և նա ակնարկէր կատարել զհրամանն, այլ նոքա յամառեալ ասէին, երթալ խորհիլ ընդ ծերունիս վանաց, որոց ետ պատասխանի Նուրի, գլխաւորք ազգին ձերոյ ետուն հաւանութիւն 'ի դատին Կոստանդինուպօլսոյ լինիլ այսպէս, և դուք իբրեւ անձինք երեւելիք եկեալ էք աստ 'ի կողմանէ Վանաց, ուրեմն վախճան տուք բանից ձերոց, դարձեալ Նշան ետ Դատաւորն, և դնացին գլխաւորք երկուց ազգաց յետ կոյս գերեզմանին։ Զկնի բաղում